Արձանագրություն N 18/5-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/5" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **ամփոփման նիստի**

ք. Երևան 21 մարտի 2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Ս. Թաթիկյան,

Անդամներ՝ Ա. Վարդանյան, Ն. Մարտիրոսյան, Մ. Գյուլումյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվող Տեղեկատվության վերաբերյալ:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից սահմանված ժամկետում չստացված Տեղեկատվության վերաբերյալ

2.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 44-րդ կետի համաձայն՝ ըստ չափաբաժինների առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ և «Մեդիսար» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից հաստատված, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ Հրավերի հավելվածներ NN 6 և 6.1: Ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/5 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին և «Մեդիսար» ՍՊԸ -ին ճանաչել ընտրված մասնակիցներ:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը կազմում է 5 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Թաթիկյան

Անդամներ՝ _____ Ա. Վարդանյան

_____ Ն. Մարտիրոսյան

_____ Մ. Գյուլումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Բաղրամյան